22 հուլիսի 2010 թվականի N 901-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 215-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Մեկ ազգ, մեկ մշակույթ համահայկական մշակութային փառատոնի 2010 թվականի ծրագիրը և իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 215-Ա որոշման N 2 հավելվածի 2-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2.	Կերպարվեստի օրեր				
1	2	3	4	5	6
2.1.	Կերպարվեստի գործիչների համահայկական համաժողով և համահայկական ընկերակցության ստեղծում	2010 թ. սեպտեմբեր-նոյեմբեր	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն «Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ (համաձայնությամբ) Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 համաժողով՝ մինչև 100 մասնակից 1 մասնագիտական ընկերակցության հիմնում
1	2	3	4	5	6
2.2.	Շրջայցեր Հայաստանի պատմամշակութային վայրեր, մշակույթի օջախներ, հանդիպումներ Հայաստանի պետական պաշտոնյաների, հոգևոր առաջնորդների և այլ անվանի մարդկանց հետ, այցեր ժամանակակից հայ կերպարվեստի գործիչ-	2010 թ. սեպտեմբեր-նոյեմբեր	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն Հայաստանյայց առաքելական եկեղեցի	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	2 այցելություն պատմամշակութային վայր առնվազն 3 հանդիպում պետական այրերի և հոգևոր առաջնորդների հետ այցելություն 2 արվեստանոց

	ների արվեստանոցներ		(համաձայնությամբ) «Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ (համաձայնությամբ) «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)		
2.3.	Վարպետության դասընթացներ՝ կերպարվեստի երիտասարդ մասնագետների համար	2010 թ. սեպտեմբեր-նոյեմբեր	«Հայաստանի նկարիչների միություն» ՀԿ (համաձայնությամբ) Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	վարպետության դասընթացներ՝ մինչև 50 երիտասարդ մասնագետների համար
2.4.	Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողների պատկերագրքի տպագրում	2010 թ. տարվա ընթացքում	ՀՀ սփյուռքի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ	1 պատկերագիրք՝ 500 տպաքանակով

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հուլիսի
Երևան